

**Դատական Գործ N: ԿԴ1/0822/02/11**

<b>Հայցադիմումը /դիմումը/ ստացվել է:</b>	11-10-2011
<b>Հայցվոր/դիմող</b>	
Անուն:	ՀՀ Կոտայքի մարզպետարան
Հասցե:	ք.Հրազդան
<b>Ներկայացուցիչ</b>	
Անուն	Մելանյա
Ազգանուն	Մարտիրոսյան
Հասցե	ք.Աբովյան, 3-րդ մ/շ, 17 շենք , բն.89
<b>Պատասխանող</b>	
Անուն	Սիրանուշ
Ազգանուն	Հայրապետյան
Հասցե	ք.Աբովյան, 7-րդ դպրոցին կից տնակ
<b>Պատասխանող</b>	
Անուն	Նոնա
Ազգանուն	Հայրապետյան
Հասցե	ք.Աբովյան, 7-րդ դպրոցին կից տնակ
<b>Պատասխանող</b>	
Անուն	Վալերի
Ազգանուն	Հայրապետյան
Հասցե	ք.Աբովյան, 7-րդ դպրոցին կից տնակ
<b>Ինքնուրույն պահանջ ներկայացնող:</b>	
<b>3-րդ անձ</b>	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
<b>Պահանջ:</b>	վտարելու պահանջի մասին
<b>Հիմնական պահանջի վիճակագրության տողի համարը:</b>	1.5
<b>Պատասխանի ստացման ամսաթիվը:</b>	
<b>Լրացուցիչ պահանջի վիճակագրության տողի համարը:</b>	
<b>Ստացման կարգը:</b>	Առաջին անգամ
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ամսաթիվ:</b>	11-10-2011
<b>Նախագահող դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Աբովյան

Դատավորի անուն:	Յուրի Սերգեյի Բաղդասարյան
<b>Դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Արևիկյան
Դատավորի անուն:	
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Անդորրագրի ներկայացման ամսաթիվ:</b>	11-10-2011
<b>Պետ. տուրք (&lt;&lt; դրամ):</b>	4000
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Որոշման ամսաթիվ:</b>	11-10-2011
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	28-11-2011
<b>Ծանուցագիրը ուղարկվել է:</b>	11-10-2011
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ժամ:</b>	10:30
<b>Նիստերի դահլիճի համար:</b>	3
<b>Նշանակվել է:</b>	Դատաքննություն
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	21-12-2011
<b>Ծանուցագիրը ուղարկվել է:</b>	28-11-2011
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ժամ:</b>	12:00
<b>Նիստերի դահլիճի համար:</b>	3
<b>Նշանակվել է:</b>	Դատաքննություն
<b>Նիստը:</b>	Կայացվել է
<b>Պատճառը:</b>	
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	25-01-2012
<b>Ծանուցագիրը ուղարկվել է:</b>	21-12-2011
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ժամ:</b>	14:00
<b>Նիստերի դահլիճի համար:</b>	3
<b>Նշանակվել է:</b>	Դատաքննություն
<b>Նիստը:</b>	Կայացվել է
<b>Պատճառը:</b>	
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	09-02-2012
<b>Ծանուցագիրը ուղարկվել է:</b>	25-01-2012
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ժամ:</b>	16:30

Նիստերի դահլիճի համար:	3
Նշանակվել է:	Վճիռ/որոշում հրապարակելու օր
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
Հայցի լուծման ամսաթիվ:	09-02-2012
Հայցի լուծումը:	Բավարարվել է
<b>Հոդված</b>	
Հոդված	ՀՀ քաղ դատ օր-ի 130-132
Հակընդդեմ հայցի լուծումը:	
Հակընդդեմ հայցի լուծման ամսաթիվ:	
Այլ նշումներ:	
Պատական ակտ (վճիռ, որոշում):	<p>Գործ թիվ ԿԴ1/0822/02/11 Վ Ճ Ի Ռ</p> <p>ՀԱՆՐԱՄԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ</p> <p>09.02.2012թ. ք.Աբովյան</p> <p>Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան նախագահությամբ՝ դատավոր ՝ Յ.Բաղդասարյան քարտուղարությամբ՝ Թ.Քարամյան հայցվորի ներկայացուցիչ՝ Մ.Մարտիրոսյան պատասխանողներ՝ Ս.Հայրապետյան Ն.Հայրապետյան Վ.Հայրապետյան</p> <p>Դռնբաց դատական նիստում, դատարանում, քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի ՀՀ Կոտայքի մարզպետարանի լիազորված անձ՝ Մելանյա Մարտիրոսյանի ընդդեմ Սիրանուշ, Նոնա, Վալերի Հայրապետյանների՝ վտարելու պահանջի մասին:</p> <p><b>Պ Ա Ր Զ Ե Ց</b></p> <p>1. Պատավարական նախապատմությունը: Հայցվոր՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի լիազորված անձ՝ Մելանյա Մարտիրոսյանը հայցադիմումով դատարանին հայտնել է, որ Աբովյան քաղաքի 2-րդ միկրոշրջանի թիվ 7 դպրոցը, անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 530834 վկայականով սեփականության իրավունքով պատկանում է ՀՀ Կոտայքի մարզպետարանին: Սեփականության իրավունքի գրանցման հիմք է հանդիսանում այն, որ Աբովյանի քաղաքապետի 07.10.2002թ.-ի թիվ 247-Ա որոշման և գույքամատյանի քաղվածքի հիման վրա ՀՀ Կառավարության 22.08.1996թ.-ի թիվ 269 որոշմամբ հատկացվել է ՀՀ Կոտայքի մարզպետարանին: Պատասխանողները առանց գրանցման հիմքերի բնակություն են հաստատել Աբովյան քաղաքի 2-րդ միկրոշրջանի 7-րդ դպրոցին պատկանող տարածքում: Բազմիցս դիմել է նրանց տարածքը ազատելու, սակայն ապարդյուն: Խնդրել է դատարանին՝ պատասխանողներ Սիրանուշ, Նոնա,</p>

Վալերի Հայրապետյաններին վտարել ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի 7-րդ դպրոցի տարածքից:

2. Հայցվորի ներկայացուցչի դիրքորոշումը:

Հայցվորի ներկայացուցիչ՝ Մ. Մարտիրայանը դատարանին տված ցուցմունքով պնդեց հայցն ամբողջությամբ և հայտնեց, որ պատասխանողների կողմից զբաղեցրած տարածքը գտնվում է դպրոցի վարչական տարածքում և հանդիսանում է դպրոցի օժանդակ տնտեսության պահեստային տարածքում, որը 22 տարի առաջ փախստականների կոմիտեի կողմից անհայտ ճանապարհով հատկացվել է պատասխանողներին:

Ներկայումս դպրոցի ենթակայությունը փոփոխվում է և այն պետք է հանձնվի ՀՀ կառավարությանն առնթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինությանը, որի պայմաններում անհրաժեշտություն է առաջացել պատասխանողներին վտարել դպրոցի տարածքից, որոնք զբաղեցնում են դպրոցի օժանդակ տնտեսության պահեստային տարածքի մի մասը, որն ըստ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի, հատկազօծում նշված է թիվ 2-ի տակ, որը պահեստային մասն է: Խնդրեց դատարանին՝ պատասխանողներ՝ Սիրանուշ, Նոնա, Վալերի Հայրապետյաններին վտարել ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի 7-րդ դպրոցի տարածքից:

3. Պատասխանողի դիրքորոշումը:

Պատասխանողներ՝ Վալերի, Սիրանուշ, Նոնա Հայրապետյանները դատարանին տված ցուցմունքներով առարկեցին հայցի դեմ և հայտնեցին, որ նշված տարածքում իրենց կողմից կատարվել է շինարարական աշխատանքներ և կարգի է բերվել շինությունը և իրենց բնակվելու մասին տեղյակ են արդեն շուրջ 22 տարի:

Հայտնեցին նաև, որ իրենց ընտանիքը հերթի մեջ է գրանցված բնակարան հատկացնելու համար և մինչև ան ստանալը իրենք չեն կարող ազատել իրենց զբաղեցրած տարածքը, քանի որ բնակվելու այլ տեղ չունեն:

Խնդրեցին դատարանին՝ հայցը մերժել:

4. Գործի փաստերը:

Անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 530834 վկայականի համաձայն՝ Աբովյան քաղաքի 2-րդ միկրոշրջանի թիվ 20 դպրոցը սեփականության իրավունքով պատկանում է Կոտայքի մարզպետարանին:

ՀՀ քաղաքաշինության նախարարության 31.10.2007թ.-ի թիվ ԿԳ-25-4532 գրության համաձայն՝ պատասխանող՝ Սիրանուշ

Հայրապետյանի դիմումին հայտնվել է, որ իրենք ընդգրկված են 2007թ. ՀՀ պետբյուջեով նախատեսված հատկացումների հաշվին իրականացվող բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով բնակարանային ապահովման ծրագրի շրջանակներում ՀՀ քաղաքաշինության նախարարի կողմից հաստատված աջակցություն ստացող անձանց ցուցակում և առաջարկվել է Կոտայքի մարզպետի հետ եռօրյա ժամկետում կնքել պայմանագիր՝ վկայագրի միջոցով բնակարան ձեռք բերելու համար, անհատույց պետական ֆինանսական այակցություն ստանալու մասին:

Կոտայքի մարզպետ Կ.Շահգալոյանի և աջակցություն ստանալու ցանկություն հայտնած Սիրանուշ, Նոնա, Վալերի

Հայրապետյանների միջև կնքվել է պայմանագիր՝ ՀՀ 2007թ.-ի պետբյուջեով „Բնակարանային ապահովում՝ բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով, ծախսային ծրագրով՝ նախատեսված հատկացումների հաշվին անհատույց պետական ֆինանսական աջակցության տրամադրման մասին:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության 12.12.2011թ.-ի թիվ 01/07/3558-11 գրության համաձայն՝ Ս. Հայրապետյանի ընտանիքը երեք անձով՝ Սիրանուշ, Նոնա, Վալերի Հայրապետյանները որպես հավակնորդ շահառու ընդգրկվել են ՀՀ Կառավարության 20.05.2004թ.-ի թիվ 747-Ն որոշմամբ հաստատված Ադրբեջանից բռնագաղթված անձանց բնակապահովության առաջնահերթ ծրագրում, ստացել է

բնակարանի գնման վկայագիր, սակայն բնակարան չի կարողացել գնել և այն մարվել է:

Վերոհիշյալ ծրագիրը Կոտայքի մարզում ավարտվել է 2008թ. մայիս ամսին և նման իրավիճակում հայտնված փախստականները շարունակում են դիտարկվել որպես առավել կարիքավոր:

Նույն ծառայության 06.12.2011թ.-ի թիվ 01/07/3486-11 գրությամբ ի պատասխան Սիրանուշ Հայրապետյանի դիմումին, հայտնվել է, որ նրա դիմումը կներկայացվի փախստականներին ժամանակավոր կացարաններում նակեցնելու համար ուղեգրերի տրամադրման գործընթացը կազմակերպելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի քննարկման:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետ Կ.Կիրակոսյանի գրությամբ ՀՀ Կոտայքի մարզպետ Կ.Շահգալոյանին հայտնվել է, որ ի կատարումն ՀՀ Կառավարության 26.01.2006թ.-ի թիվ 346-Ն որոշման՝ ՀՀ Կոտայքի մարզի հանրակրթական դպրոցներին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված շենքերի շինությունների ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ վարչության տնօրինությանն ընդունելու համար տեղեկացվում է, որ մի շարք դպրոցներում կան որոշակի

անհամապատասխանություններ և անճշտություններ ներկայացված տեղեկատվությունների, իրավունքի պետական գրանցման վկայականների և փաստացի վիճակի միջև:

Նշված դպրոցների հանձնման -ընդունման աշխատանքներն ավարտելու համար խնդրվել է սեղմ ժամկետում վարչություն ներկայացնել սեփականության իրավունքի պետական գրանցման ճշտված վկայականները և համապատասխան տեղեկատվությունը նշված գույքի վերաբերյալ:

ՀՀ Կոտայքի մարզպետ Կ.Շահգալոյանի 20.06.2011թ.-ի թիվ 01/01 1/2129-11 գրությամբ ՀՀ Կոտայքի մարզի Արմավյան քաղաքի թիվ 7 հիմնական դպրոցի տնօրեն տիկին Մ.Մարտիրոսյանին հայտնվել է, որ թիվ 7 դպրոցի տարածքում առանց համապատասխան փաստաթղթային ձևակերպումների՝ բնակության հաստատած Հայրապետյանների ընտանիքը վեճի առարկա հանդիսացող շինությունը զբաղեցնում է ապօրինաբար:

5. Կիրառելի իրավունք

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163 հոդվածի 1-ին կետի համաձայն՝

1. Սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը:

Տիրապետման իրավունքը գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

Օգտագործման իրավունքը գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Օգուտը կարող է լինել եկամտի, պտուղների, աճի, ծնաճի և այլ ձևերով:

Տնօրինման իրավունքը գույքի ձակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

2. Սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները, գույքը գրավ դնել կամ տնօրինել այլ եղանակով:

Նույն օրենսգրքի 274 հոդվածի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի իր գույքը հետ պահանջել ուրիշի ապօրինի տիրապետումից:

Նույն օրենսգրքի 277 հոդվածի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի պահանջել վերացնելու իր իրավունքների ամեն մի խախտում, թեկուզև այդ խախտումները զուգորդված չեն եղել

տիրապետումից զրկելու հետ:

6.Վերլուծություն:

Այսպիսով, դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53 հոդվածի 1-ին կետի կարգով, գնահատելով յուրաքանչյուր ապացույց գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, դատարանը հաստատված համարելով այն հանգամանքը, որ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 530834 վկայականի համաձայն՝ Աբովյան քաղաքի 2-րդ միկրոշրջանի թիվ 7 /20/ դպրոցը սեփականության իրավունքով պատկանում է Կոտայքի մարզպետարանին և դպրոցի ենթակայությունը փոփոխվել է և այն պետք է հանձնվի ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինմանը, մինչդեռ, պատասխանողներ՝ Սիրանուշ, Նոնա, Վալերի Հայրապետյանները ապօրինաբար են զբաղեցնում վերը նշված դպրոցի պահեստային տարածքի մի մասը, որպիսի պայմաններում դատարանը գտավ, որ հայցը հիմնավորված է, այն բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163, 274, 277 հոդվածների պահանջներից և ենթակա է բավարարման, այն է՝ պատասխանողներ Սիրանուշ, Նոնա, Վալերի Հայրապետյաններին վտարել ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի 7-րդ դպրոցի տարածքից:

Ինչ վերաբերվում է պատասխանողների այն փաստարկներին, որ 22 տարի զբաղեցնում են տարածքը, նշված տարածքում իրենց կողմից կատարվել է շինարարական աշխատանքներ, իրենց ընտանիքը հերթի մեջ է գրանցված բնակարան հատկացնելու համար և մինչև ան ստանալը իրենք չեն կարող ազատել իրենց զբաղեցրած տարածքը, քանի որ բնակվելու այլ տեղ չունեն, ապա դրանք հիմք չեն հայցը մերժելու համար:

Դեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132 հոդվածներով դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

ՀՀ Կոտայքի մարզպետարանի լիազորված անձ՝ Մելանյա Մարտիրոսյանի հայցը բավարարել ամբողջությամբ:  
Պատասխանողներ Սիրանուշ, Նոնա, Վալերի Հայրապետյաններին վտարել ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի 7-րդ դպրոցի տարածքից:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:  
Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ պարտապանների հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ Յ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Դատական ակտի ամսաթիվը: 09-02-2012

Ակտով հօգուտ պետ. բյուջեի բռնագանձման ենթակա պետ. տուրքի չափը (ՀՀ դրամ): 0

Ամսաթիվ: 09-03-2012

Այլ նշումներ:

<b>Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ:</b>	14-03-2012
<b>Էջերի քանակը:</b>	56
<b>Գործին կից նյութեր:</b>	
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ամսաթիվ:</b>	16-03-2012
<b>Էջերի քանակը:</b>	56
<b>Գործին կից նյութերը:</b>	
<b>Այլ նշումներ:</b>	